ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< 13 >> մարտի 2015 թ. N 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ<<ՔԵՎՕՐՔ ԵՎ ԱՆԻՏԱ ՓԱԿՈՒՄԵԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ <<ՀԻՍՈՒՍԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ >> ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2015 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Քեվօրք և Անիտա Փակումեանների հիշատակի <<Հիսուսի մանուկներ>> առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում անցկացնել 2012թ,2013թ,2014թ թվականների գործունեության համակարգի գնահատման աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Սրապիոն Մարտիրոսյանի և Հայկ Պողոսյանի կողմից: Հաշվի առնելով Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի 2015թվականի մարտի 10-ի զեկուցագիրը՝ աուդիտի աշխատանքներին մասնակից դարձնել Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին, ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսական բաժնի պետ Հովհաննես Հարությունյանին և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Յուրի Մանվելյանին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Արմավիրի մարզի <<Քեվօրք և Անիտա Փակումեանների հիշատակի <<Հիսուսի մանուկներ>> առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենին և հաշվապահին(համաձայնությամբ):
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 7 աշխատանքային օրյա ժամկետում:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ